

1. «Ինեկորանկ» ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 17), այսուհետ՝ Բանկ, Շենգավիթ 2 մասնաճյուղի վերաբրենդավորման նախագծի շրջանակներում, գնառաջարկների ներկայացման հարցման (ԳՆՀ) ծանուցման միջոցով հրավիրում է իրավաբանական և/կամ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներին) ներկայացնելու գնառաջարկներ՝ **Հավելված 2** ծավալաթերթով, **Հավելված 3** և **Հավելված 4** գծագրերին և էսքիզային նախագծերին համապատասխան կահույքի պատրաստման, մատակարարման և տեղադրման վերաբերյալ:
2. Գնառաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 02.12.2022թ. ժ. 17:00
 - Էլեկտրոնային տարբերակով՝ procurement@inecobank.am էլ. Հասցեով՝ նամակի վերնագրում նշելով ԳՆՀ կոդը –PROC02122022/Կահույք: Գնառաջարկի փաթեթը անհրաժեշտ է ուղարկել «.rar» տարբերակով, կոդավորված, իսկ կոդը ուղարկել ԳՆՀ ավարտից հետո 05.12.2022թ.-ին մինչև ժ 11:00 կամ
3. Փաստաթղթային տարբերակով փակ, կնքված ծրարով՝ «Ինեկորանկ» ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով՝ ծրարի դարձերեսին նշելով՝
 - ԳՆՀ կոդը - PROC02122022/Կահույք
 - մասնակցի անվանումը,
 - ներկայացման ամսաթիվը,
 - ստացող՝ «Ինեկորանկ» ՓԲԸ - Բյուջետավորման և հսկողության բաժին:
4. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել՝ Կոնտակտային անձ՝ Գնառաջարկների ներկայացման կարգի վերաբերյալ հարցերի դեպքում՝ Հակոբ Պողոսյան + 374 43002272
Ծավալաթերթի, նախագծի կամ այլ մասնագիտական հարցերի դեպքում՝ Մարտուն Խողերյան +374 93139987
5. Գնառաջարկների ներկայացման հարցումը (ԳՆՀ) չի համարվում հրապարակային մրցույթ: Այն հանդիսանում է շուկայում առկա գնառաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում կարող է ընդունվել որոշում որևէ առաջարկի ընդունման և կամ մերժման վերաբերյալ: Գնառաջարկների ներկայացման հարցման գործընթացը չի կարգավորվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-465, 1043-1044 հոդվածներով և 'Հրապարակային սակարկությունների մասին' ՀՀ օրենքով:
6. Մասնակիցներն ինքնուրույն են հոգում Գնառաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված իրենց ծախսերը, իսկ Բանկը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ ԳՆՀ-ի գործընթացի ընթացքից և արդյունքներից:
7. Բանկն իրավունք ունի մերժել Գնառաջարկը, եթե Մասնակիցն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Բանկի կողմից սահմանված էթիկայի կանոնների (Հավելված 1) դրույթներից որևիցե մեկը:
8. Մասնակիցը պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերի սկանավորված օրինակները՝ ստորագրված և կնքված լիազոր անձի կողմից՝
 - Գնառաջարկ,
 - Բանկի կողմից սահմանված էթիկայի կանոններին համաձայնությունը՝ Հավելված 1
 - Երաշխիքային սպասարկման մասին տեղեկատվություն
 - Առնվազն 3 (երեք) տարվա փորձ տվյալ ոլորտում
 - Վճարման պայմանների մասին տեղեկատվություն (կանխավճարի չափ)
 - Վերջին 3 տարում կատարված նմանատիպ աշխատանքների պայմանագիր և հանձման ընդունման ակտ, պատվիրատուի կորդինատներ, հարկ եղած դեպքում նաև երաշխավորություն
 - Պետական և հարկային գրանցման փաստաթղթերի վկայականներն ու պատճենները:
9. Գնառաջարկը պատրաստելիս անհրաժեշտ է ուղղորդվել Հավելված 2-ում ներկայացված ծավալաթերթով:
10. Գնառաջարկը լրացնելիս Մասնակցին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող նկարագրերը:
11. Գնառաջարկը պետք է ներառի բոլոր ծախսերը և ՀՀ տարածքում գործող պարտադիր վճարումները և հարկերը: Գները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ դրամով:

12. Գնառաջարկները պետք է լինեն ուժի մեջ առնվազն 30 աշխատանքային օր՝ հաշվարկված գնառաջարկների ներկայացման սահմանված վերջնաժամկետից:
13. Մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Սույն կանոնի խախտման դեպքում՝ տվյալ հայտատուի բոլոր գնառաջարկները մերժվում են՝ առանց հաշվի առնելու վերջիններիս առավելությունները:
14. Վճարումները կատարվում են **հնեկորանկում բացված բանկային հաշվի վրա, Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից վավերացված կատարողական ակտերի հիման վրա:**
15. Վերը նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված Գնառաջարկները չեն դիտարկվի:

Առաջարկում ենք կատարել աշխատանքները _____ օրացուցային օր ժամանակահատվածում:

Պահանջվող կախնավճար _____ դրամ:

_____ Մասնակցի/կազմակերպության անվանումը

_____ Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, ստորագրությունը՝

" _____ 2022թ

Կ.Կ